# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԲԱԶՈՒՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք,
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ԳՅՈՒՂ ԲԱԶՈՒՄ 1 ՓՈՂՈՑ ԹԻՎ 2, Հեռ. (0322) 64109 ,
bazum.lori@mta.gov.am

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

N 016/53
*12 փետրվար 2019թ.*

Կից ներկայացնում ենք Բազում համայնքի ղեկավարի թիվ 06-Ա, 07-Ա, 08-Ա և 09-Ն որոշումները.

Առդիր՝ 7 էջ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*Կատ.՝*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

07 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 06-Ա

06-023-0002-0023 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԻՇԱ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Միշա Հովհաննեսի Գրիգորյանի դիմումը, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 02,05,1991 թվականի թիվ 2 որոշումը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության <<Քաղաքացիական օրենսգրքի>> 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ մասով, իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Ե Մ

1, Վերականգնել 06-023-0002-0023 ծածկագրի տակ գտնվող 0,10268 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ Միշա Հովհաննեսի Գրիգորյանի /ծնված 15,01,1955թ/ սեփականության իրավունքը:

2, Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:

3,Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասից հատկացրած 0,10268 հա հողամասն անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել և օրենքի ուժով ճանաչել Միշա Հովհաննեսի Գրիգորյանի սեփականության իրավունքը:

4,Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

5,Անշարժ գույքին տրամադրել փոստայի հասցե՝ գյուղ Բազում 1-ին փողոց 1-ին նրբանցք 31:

6,Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռիի Մարզայի ստորոբաժանումում:

ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

07 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 07-Ա

06-023-0214-0009 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԻՇԱ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Միշա Հովհաննեսի Գրիգորյանի դիմումը, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 02,05,1991 թվականի թիվ 2 որոշումը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության <<Քաղաքացիական օրենսգրքի>> 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ մասով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1, Վերականգնել 06-023-214-0009ծածկագրի տակ գտնվող 0,28383 հա գյուղատնտեսակն նշանակության վարելահողի նկատմամբ Միշա Հովհաննեսի Գրիգորյանի /ծնված 15,01,1955թ/ սեփականության իրավունքը:

2, Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3, Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:

3,Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասից հատկացրած 0,28383 հա հողամասն անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել և օրենքի ուժով ճանաչել Միշա Հովհաննեսի Գրիգորյանի սեփականության իրավունքը:

4,Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռիի Մարզայի ստորոբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՄՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 08-Ա

### ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՆԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Զորոհավաքային նախապատրաստության և զորահավաքի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածը և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մայիսի 20-ի << Զորահավաքային մարմինների օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին>> թիվ 591 որոշման՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ

1. Հաստատել Լոռու մարզի  Բազում համայնքի զորահավաքային մարմնի կանոնադրությունը համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

11.02.2019 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 08-Ա ՈՐՈՇՄԱՆ

# ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԲԱԶՈՒՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՀ Լոռու մարզի Բազում համայնքի զորահավաքային մարմնի կանոնադրության (այսուհետև կանոնադրություն) նպատակն է սահմանել մարմնի իրավունքներն ու պարտականությունները, ենթակայությունը, խնդիրները և դրանց լուծման հիմնական ուղղությունները:

1. Զորահավաքային մարմինն ստեղծվել և գործելու է ՀՀ Լոռու մարզի Բազումի համայնքապետարանում ու զորահավաքային առաջադրանք կատարող կազմակերպություններում:

2. Զորահավաքային մարմինն իր աշխատանքի ընթացքում ղեկավարում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ու անմիջական ղեկավարի որոշումներով, որի վրա անհատական պատասխանատվություն է դրված զորահավաքային նախապատրաստության միջոցառումների կազմակերպման և իրականացման:

## ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

3. Զորահավաքային մարմնի հիմնական խնդիրներն են խաղաղ ժամանակ զորահավաքային նախապատրաստության և քաղաքացիական պաշտպանության աշխատանքների կազմակերպումը և համակարգումը:

4. Զորահավաքային նախապատրաստության խնդիրներին համապատասխան
Տեղական ինքնակառավարման մարմնում և զորահավաքային առաջադրանք կատարող կազմակերպություններում գործող

զորահավաքային մարմինները զորահավաքային նախապատրաստության մասով իրականացնում են
սահմանված զորահավաքային առաջադրանքի կատարումն ապահովող զորահավաքային պլանի մշակման աշխատանքի կազմակերպումը,
զորահավաքային պլանի կատարումն ապահովող միջոցառումների մշակումը և իրականացումը,
զորահավաքային նախապատրաստության մասով պաշտպանական պատվերի (առաջադրանքի), ինչպես նաև համապատասխան պայմանագրերի կատարումն ապահովող միջոցառումների մշակումը,
սահմանված կարգով համայնքի ղեկավարի աշխատակազմի մասնագետների և որակյալ բանվորների ամրագրման աշխատանքների իրականացումը,
զորահավաքային նախապատրաստության միջոցառումների իրականացման արդյունքների վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելը,
զորահավաքային նախապատրաստության ոլորտին առնչվող այլ աշխատանքներ:

4.1. Քաղաքացիական պաշտպանության բնագավառում իրականացվում են հետևյալ գործառույթները՝
1) քաղաքացիական պաշտպանության պլանի մշակում ու մասնակցություն դրանց մշակման աշխատանքներին.
2) Բազում համայնքի քաղաքացիական պաշտպանության զարգացման և այդ նպատակի համար ներդրումների, նյութատեխնիկական միջոցների և աշխատանքային ռեսուրսների վերաբերյալ առաջարկությունների մշակում.
3) քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի քաղաքացիական պաշտպանության գծով պատրաստման կազմակերպում.
4) համայնքի քաղաքացիական պաշտպանության կազմավորումների քաղաքացիական պաշտպանության գծով պարտականությունների կատարման նկատմամբ հսկողություն.
5) ղեկավար մարմնի հանձնարարությամբ քաղաքացիական պաշտպանության կազմավորումների քաղաքացիական պաշտպանության գծով գործունեության ուսումնասիրություններին մասնակցություն.
6) սահմանված կարգով քաղաքացիական պաշտպանության վերաբերյալ ներկայացվող հաշվետվությունների վերլուծություն և դրա արդյունքները ղեկավարին ներկայացնելը.
7) իր լիազորությունների սահմաններում, ինչպես նաև մարմնի ղեկավարի հանձնարարությամբ, առաջարկությունների, տեղեկանքների, հաշվետվությունների, զեկուցագրերի և այլ գրությունների նախապատրաստում.
8) համայնքի քաղաքացիական պաշտպանության կազմավորումների անդամներին մասնագիտական հարցերի վերաբերյալ խորհրդատվական օգնության ցուցաբերում.
9) քաղաքացիական պաշտպանության հարցերով անձնակազմի

նախապատրաստության և քաղաքացիական պաշտպանության աշխատանքների կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների մշակում և դրանք ներկայացնելը.

10) քաղաքացիական պաշտպանության ոլորտին վերաբերող այլ հարցերի համակարգում և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպում:

5. Զորահավաքային մարմիններն իրավունք ունեն

ա) առաջարկություններ ներկայացնելու զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի ու քաղաքացիական պաշտպանության աշխատանքների կատարելագործման վերաբերյալ.

բ) իրենց իրավասության սահմաններում խորհրդակցություններ հրավիրելու.

գ) իրենց իրավասության սահմաններում համակարգելու զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի ու քաղաքացիական պաշտպանության հետ կապված միջոցառումները:

## ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԱՂՏՆԻ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

6. Զորահավաքային մարմնի կառուցվածքը և կազմը որոշվում են ելնելով զորահավաքային նախապատրաստության աշխատանքների բնույթից և ծավալից:

7. Զորահավաքային մարմնի ղեկավարը համայնքի ղեկավարն է, որը ենթարկվում է հաշվետու է Լոռու մարզի Զորահավաքային մարմնի ղեկավարին:

8. Զորահավաքային մարմինի գաղտնի գործավարությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 09-Ն

### ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԱՍՏԱՏՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

Բազում համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնել 2019 թվականի բյուջեում կատարված փոփոխությունները։

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**